# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ 28/17**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Երպետ» ՍՊԸ-ի 03.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից նյութերը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-28/17 բողոք), «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 17.03.2017թ. և 21.03.2017թ. գրությունները, ինչպես նաև ԳԲԽ-28/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 21.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

### 1. «Երպետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 03.03.2017թ. ներկայացված բողոքով «Երպետ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գնդային փականների ձեռքբերման նպատակով կազմակերպված «N013/GArm/17_2.2_00/03.02.17» ծածկագրով բաց առաջարկների հարցման հրավերի և ծանուցման համաձայն՝ փաստաթղթային հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 07.02.2017թ. ժամը 17:30-ից մինչև 17.02.2017թ. ժամը 9:30-ը, ք. Երևան, Թբիլիսյան 43 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 1 մասնաշենք 3-րդ հարկ ՄԳՆ և Ա բաժին հասցեով, իսկ հայտերի բացման նիստի վայրը, օրը և ժամը սահմանված է եղել 17.02.2017թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Թբիլիսյան 43 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 1 մասնաշենք 3-րդ հարկ ՄԳՆ և Ա բաժին հասցեով:

«Երպետ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ բաց առաջարկների հարցման հանձնաժողովը բացման նիստին արձանագրել է, որ առաջարկներ են ներկայացրել «Երպետ» ՍՊԸ-ն և «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն (ООО "ТД ПТПА"): «Երպետ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերին համապատասխան՝ փաստաթղթային ձևով և փակ ծրարով, իսկ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով (առանց փակ ծրարի), որի հայտը պետք է գնահատվեր որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ, որը հանձնաժողովի կողմից չի կատարվել, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մասնակիցների այն հայտերը, որոնք չեն համապատասխանում հրավերի պահանջներին ենթակա են մերժման:

«Երպետ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին հետևյալ հիմնավորմամբ՝

1. Հայտը ներկայացնելու կարգի համաձայն՝ բաց առաջարկների հարցմանը մասնակցելու համար մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում բաց առաջարկների հարցման հայտ: Բաց առաջարկների հարցման հայտերը ներկայացվում են մինչև բաց առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված ժամկետի ավարտը: Բաց առաջարկների հարցման փաստաթղթերով հայտերի պատրաստման կարգը նկարագրված է բաց առաջարկների հարցման փաստաթղթերի II մասում՝ բաց առաջարկների հարցման հայտերը պատրաստելու հրահանգում:

Բաց առաջարկների հարցման փաստաթղթերով հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան բաց առաջարկների հարցման ծանուցման և բաց առաջարկների հարցման փաստաթղթերի տեղեկագրում հրապարակման պահից մինչև փետրվարի 17-ը ժամը՝ 9:30, ք. Երևան, Թբիլիսյան 43 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 1 մասնաշենք 3-րդ հարկ ՄԳՆ և Ա բաժնում:

Բաց առաջարկների հարցման հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Դիոնիս Մարգարյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն

գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

2. Հայտը պատրաստելու կարգի 5.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով: Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև 7.4 կետով նախատեսված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից և 1 պատճեից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը (փաթեթները դրվում են մեկ ծրարի մեջ): Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վորջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հայտը պատրաստելու կարգի 5.2 կետի համաձայն՝ սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն)

բ) բաց առաջարկների հարցման ծածկագիրը

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

ե) էլեկտրոնային փոստի հասցեն:

Հայտը պատրաստելու կարգի 5.3 կետի համաձայն՝ սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Ելնելով վերոգրյալից՝ «Երպետ» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ և ապօրինի համարել՝

1. 17 փետրվարի 2017թ. թիվ 2 արձանագրությունով ՕՕՕ “ՏԴ ՊՏՊԱ”-ի («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ) կողմից բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված կարգին որոշումը:

2. 20 փետրվարի 2017թ. թիվ 3 արձանագրությունով որակավորման գնահատման նիստի ՕՕՕ “ՏԴ ՊՏՊԱ”-ին («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ), որպես բավարար գնահատված որոշումը:

3. Բաց առաջարկների հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ՕՕՕ “ՏԴ ՊՏՊԱ”-ին («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ), որպես բավարար գնահատված բաց առաջարկների հայտ ներկայացրած մասնակից որոշումը:

4. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «N013/GArm/17_2.2_00/03.02.17» ծածկագրով բաց առաջարկների հարցման շրջանակներում պայմանագրի կնքման գործընթացը:

«Երպետ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 10.03.2017թ. ժամը 16:45-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-28/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**2.«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը**

Կենտրոնը 09.03.2017թ. թիվ 02/04.1/845-17 գրությամբ դիմել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին և խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «N013/GArm/17_2.2_00/03.02.17» ծածկագրով բաց առաջարկների հարցմանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 17.03.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը՝

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով Հանրային կազմակերպությունների գնումների համար սահմանված են առանձնահատկություններ, մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված է՝ «Հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով»:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի վերը նշված դրույթները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումները կատարվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ տնօրենների խորհրդի 22.11.2013թ. թիվ 4/73-2013 որոշմամբ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 27.12.2013թ. թիվ 110 հրամանով հաստատված ««Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գնումների մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

26.03.2014թ. N 61Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների համաձայն: Հարկ է նշել, որ Կարգը, ի թիվս այլ համացանցային կայքերի, տեղադրված է գնումների էլեկտրոնային տեղեկատու՝ www.gnumner.am կայքում:

Կարգի դրույթները չեն սահմանափակում (արգելում) ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում անցկացնելու ժամանակ գնման մասնակցի կողմից էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացնելու հնարավորությունը, ավելին Կարգի 9.7.2. կետով ուղղակի նախատեսված է էլեկտրոնային փաստաթղթերի ձևով հայտերի ներկայացման հնարավորությունը: Վերը նշված հնարավորությունը չի սահմանափակում նաև գնդային փականների ձեռքբերման բաց առաջարկների հարցման հրավերը:

Այսպես, վերը նշված գնդային փականների ձեռքբերման հրավերի հայտերի պատրաստման կարգի 5.1-րդ կետում հստակ շարադրված է՝ «Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև 7.4 կետով նախատեսված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից և 1 պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը (փաթեթները դրվում են մեկ ծրարի մեջ): Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ»:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից:», ինչը թույլ է տալիս ընդունել, որ հայտը կարող է փաստաթղթային ձևով չներկայացվել:

Այնինչ, «Երպետ» ՍՊԸ-ն իր բողոքում արտատպելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վերը նշված գնդային փականների ձեռքբերման հրավերի հայտերի պատրաստման կարգի 5.1-րդ կետը, այդ կետի բովանդակությունից հանել է «Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող» բառերը, դրանով խեղաթյուրելով 5.1-րդ կետի բովանդակությունը:

Հաշվի առնելով օտարերկրյա աղբյուրներից գնումների իրականացման առանձնահատկությունները, էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացնելու հնարավորությունը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարծիքով, սահմանափակումը կհակասեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ նպատակներին և սկզբունքներին:

Տվյալ դեպքում, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից անցկացված գնդային փականների ձեռքբերման N 013/Garm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցմանը մասնակցել են երկու ընկերություն՝ մասնակից 1-ը՝ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն (ООО "ТД ПТПА") և կոնսորցիումի եղանակով միավորված մասնակից 2՝ «Երպետ» ՍՊԸ-ն և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ՝ «Ռոս Սերվիս» ՍՊԸ-ն (ООО "РосСервис"):

«ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն էլեկտրոնային տարբերակով փաստաթղթերը բաց առաջարկների հարցման հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է 16.02.2017թ-ին (ժամը 12:52) և Ընկերության գնումների անցկացման քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկել հաղորդագրություն՝ հայտնելով, որ փաստաթղթերի բնօրինակները ուղարկվում են էքսպրես փոստով, քանի որ կան տեխնիկական խնդիրներ կապի կազմակերպության հետ: Հանձնաժողովի քարտուղար՝ Դ. Մարգարյանը «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ի հայտը գրանցամատյանում գրառել է 16.02.2017թ.-ին (ժամը 12:54): Կապի կազմակերպության բեռնագրի համաձայն՝ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ի հայտը և կից բնօրինակ փաստաթղթերը հանձնվել են կապի կազմակերպությանը 17.02.2017թ-ին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կապի կազմակերպությանը մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը տրված գրավոր դիմումները և ծանուցումները համարվում են ժամկետին տրված:»:

N 013/Garm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցման հրավերով նախատեսված է մասնակցելու հայտի ներկայացման վերջնաժամկետ, այն է՝ 17.02.2017թ. ժամը 09.30:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330 հոդվածի 2-րդ մասի դրույթների ուժով համարվում է, որ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն հանձնելով հայտը և կից փաստաթղթերը կապի ծառայությանը 17.02.2017թ-ին, դրանք «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին տրվել են ժամկետի մեջ:

Հարկ է նշել նաև, որ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ի կողմից կապի կազմակերպության միջոցով ուղարկված փաստաթղթերի բնօրինակները ամբողջությամբ համապատասխանում են «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված օրինակներին:

2. «Երպետ» ՍՊԸ-ն իր բողոքում նշել է, որ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն իր առաջարկը ներկայացրել է ինչ որ էլեկտրոնային փոստի, այնինչ՝ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն, բաց առաջարկների հարցման պահանջին համապատասխան, առաջարկները էլեկտրոնային տարբերակով ուղարկել է, ինչպես վերը նշվեց, բաց առաջարկների հարցման հանձնաժողովի քարտուղար Դ. Մարգարյանի էլեկտրոնային հասցեին, որը նշված է բաց առաջարկների հարցման ծանուցման մեջ:

3. Բողոքաբերը բողոքում նշել է, որ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չպետք է գնահատվեր:

Այս կապակցությամբ, հարկ ենք համարում նշել, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 26.03.2014թ. N61Ա որոշմամբ սահմանվել են հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կարծիքով, այդ լրացուցիչ պահանջների համաձայն՝ հանրային կազմակերպությունները, մինչև գնումների իրականացումը, պետք է անցկացնեն շուկայի ուսումնասիրություններ: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն կատարել է վերը նշված պահանջը հինգ ընկերությունների մասնակցությամբ, որի արդյունքների համաձայն ամենաշահավետ գնային առաջարկը ներկայացրել էր «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն՝ մասնակից 2-ի առաջարկած գնից 64283989.8 դրամ (առանց ԱԱՀ-ի) ցածր գնով, բացի այդ «ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հուսալի գործընկերներից և արդեն շուրջ 3 տարի պատշաճ կերպով իրականացնում է «ՊՏՊԱ» ընկերության արտադրած գնդային փականների մատակարարում, որոնք հուսալի և ապահով աշխատում են գազատրանսպորտային և գազաբաշխման համակարգերում:

Ելնելով վերոգրյալից, շուկայի ուսումնասիրությունների արդյունքով առավել շահավետ առաջարկը ներկայացրած ընկերության փաստաթղթերը չդիտարկելը և հաշվի չառնելը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարծիքով, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

4. Բողոքի «բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները» վերնագրով 2-րդ կետում, «Երպետ» ՍՊԸ-ն նշել է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-

րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը, 30 հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը, 31-րդ հոդվածի 1-ին կետը, սակայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է հանրային կազմակերպություն և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարծիքով, բողոքաբերի վկայակոչած դրույթները կիրառելի չեն Ընկերության (որպես հանրային կազմակերպություն) նկատմամբ:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակից 2-ը («Երպետ» ՍՊԸ և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ՝ «Ռոս Սերվիս» ՍՊԸ-ն (ООО «РосСервис»)) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից անցկացված բաց առաջարկների հարցման գործընթացին մասնակցել է համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (կոնսորցիումով) և այդ կոնսորցիումի մասնակիցները համաձայն հրավերի 7.4.1 կետի կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարծիքով, կոնսորցիումի միայն մեկ մասնակիցը՝ «Երպետ» ՍՊԸ-ն, չունենալով համապատասխան լիազորություն չի կարող միանձնյա բողոքարկել պատվիրատուի գործողությունները (որոշումները), քանի որ կոնսորցիումի անդամների կողմից 15.02.2017թ. ք. Երևանում ստորագրված կոնսորցիում ստեղծելու մասին պայմանագրով «Երպետ» ՍՊԸ-ին ՀՀ գնումների մասին օրենքով նախատեսված բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու կամ միայնակ կոնսորցիումի անունից վերը նշված խորհրդում հանդես գալու իրավասություն չի տրվել (վերապահվել):

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն հարկ է համարում հրավիրել բողոքարկման խորհրդի ուշադրությունը նաև «Երպետ» ՍՊԸ-ի և «Ռոս Սերվիս» ՍՊԸ-ի միջև 15.02.2017թ. կնքված՝ կոնսորցիում ստեղծելու մասին պայմանագրի դրույթներին, մասնավորապես՝ պայմանագրի 8-րդ կետում նշված է, որ պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, սակայն ներկայացված պայմանագիրը ռուսերեն լեզվով է:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարծիքով, այս հանգամանքը նույնպես ունի էական նշանակություն «Երպետ» ՍՊԸ-ի բողոքի քննության համար այն տեսանկյունից, որ նշված պայմանագրի բովանդակությունը դրա դրույթների արժանահավատության նկատմամբ կասկածի հիմքեր է ստեղծում, որոնց պատճառով ևս հնարավոր չէ ստույգ որոշել «Երպետ» ՍՊԸ-ի կողմից «Ռոս Սերվիս» ՍՊԸ-ի շահերը ներկայացնելու իրավասությունը:

6. «Երպետ» ՍՊԸ-ի պահանջը, ըստ բողոքի, հետևյալն է. «Խնդրում եմ չեղյալ և ապօրինի համարել»՝

□17 փետրվարի 2017թ. թիվ 2 արձանագրությունով «ՕՕՕ ,,ՏԴ ՊՏՊԱ,,-ի («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ) կողմից բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց առաջարկների հարցման փաստաթղթերով սահանված կարգին» որոշումը:

□20 փետրվարի 2017թ. թիվ 3 արձանագրությունով «որակավորման գնահատման նիստի ՕՕՕ ,,ՏԴ ՊՏՊԱ,,-ին («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ), որպես բավարար գնահատված» որոշումը:

□«բաց առաջարկների հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ՕՕՕ ,,ՏԴ ՊՏՊԱ,,-ին («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ), որպես բավարար գնահատված բաց առաջարկների հայտ ներկայացրած մասնակից» որոշումը:

□Ժամանակավոր միջոց կիրառել Կասեցնել №013/GArm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցման շրջանակներում պայմանագրի կնքման գործընթացը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց սույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. սույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին»:

Համադրելով բողոքաբերի պահանջը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված խորհրդի իրավասությունները, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարծիքով, «Երպետ» ՍՊԸ-ի պահանջը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներից:

Բացի այդ, անհասկանալի է թե պահանջի («չեղյալ և ապօրինի համարել») և դրա 3-րդ և 4-րդ կետերի վերաբերյալ բողոքարկման խորհրդի կողմից ինչ որոշումներ պետք է կայացվեն:

Ելնելով վերոգրյալից՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն խնդրել է մերժել «Երպետ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 21.03.2017թ.-ին Կենտրոնին է ներկայացրել բաց առաջարկների հարցման հանձնաժողովի 21.03.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, որի համաձայն՝ գնդային փականների գնման հանձնաժողովը որոշում է հրաժարվել և ավարտել №013/GArm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցման գործընթացը, համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների կարգի 9 կետի 9.5.1 ենթակետի և ծանուցման (հայտարարություն), բաց առաջարկների հարցման հրավերով պահանջված ապրանքների գնման պահանջը դադարելու պատճառով (ֆինանսական միջոցների անբավարարության և տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության պատճառով):

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում կայացած ԳԲԽ-28/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել են Կենտրոնին հայտնած դիրքորոշումը:

**3. ԳԲԽ-28/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-28/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գնդային փականների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «N013/GArm/17_2.2_00/03.02.17» ծածկագրով բաց առաջարկների հարցում, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ «Երպետ» ՍՊԸ-ն ООО "РосСервис"-ի հետ կոնսորցիումով և ООО"ТД ПТПА"» -ն:

2. Բաց առաջարկների հարցման գնահատող հանձնաժողովը 17.02.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ 16.02.2017թ. թիվ 1346 նամակով ООО"ТД ПТПА"-ն խնդրել է դիտարկել իր կողմից ներկայացված հայտը էլեկտրոնային տարբերակով՝ սուրհանդակային ծառայության աշխատանքի տեխնիկական խնդիրների հետ կապված, և գնահատող հանձնաժողովը նույն կետով արձանագրել է, որ ООО"ТД ПТПА"-ի կողմից բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված

փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց առաջարկների հարցման փաստաթղթերով սահմանված կարգին:

3. Բաց առաջարկների հարցման գնահատող հանձնաժողովը 20.02.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ ООО"ТД ПТПА"-ի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, ներկայացված ապրանքների տեխնիկական չափորոշիչները համապատասխանում են հրավերով պահանջված ապրանքների չափորոշիչներին և ООО"ТД ПТПА"-ի կողմից ներկայված հայտի էլեկտրոնային տարբերակի և բնօրինակի միջև որևէ տարբերություն չի հայտնաբերվել, ամփոփելով նիստը, հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ООО"ТД ПТПА"-ին, որպես բավարար գնահատված բաց առաջարկների հարցման հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Երպետ» ՍՊԸ և ООО"РосСервис"-ին (կոնսորցիում):

4. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 21.03.2017թ.-ին Կենտրոնին է ներկայացրել բաց առաջարկների հարցման հանձնաժողովի 21.03.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, որի համաձայն՝ գնդային փականների գնման հանձնաժողովը որոշում է հրաժարվել և ավարտել №013/GArm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցման գործընթացը, համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների կարգի 9 կետի 9.5.1 ենթակետի և ծանուցման (հայտարարություն), բաց առաջարկների հարցման հրավերով պահանջված ապրանքների գնման պահանջը դադարելու պատճառով (ֆինանսական միջոցների անբավարարության և տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության պատճառով):

**<u>4. ԳԲԽ-28/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին ուղղված 20.03.2017թ. եզրակացության նախագծում կատարել է համապատասխան փոփոխություն և 21.03.2017թ. եզրակացությամբ առաջարկել է «Երպետ» ՍՊԸ-ի 03.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

## 5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Երպետ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. բողոքով Խորհրդին խնդրել է չեղյալ և ապօրինի համարել՝

□17 փետրվարի 2017թ. թիվ 2 արձանագրությունով ՕՕՕ ,,ՏԴ ՊՏՊԱ,,-ի («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ) կողմից բաց առաջարկների հարցման փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց առաջարկների հարցման փաստաթղթերով սահանված կարգին» որոշումը:

□20 փետրվարի 2017թ. թիվ 3 արձանագրությունով «որակավորման գնահատման նիստի ՕՕՕ ,,ՏԴ ՊՏՊԱ,,-ին («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ), որպես բավարար գնահատված» որոշումը:

□«բաց առաջարկների հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ՕՕՕ ,,ՏԴ ՊՏՊԱ,,-ին («ՏԴ ՊՏՊԱ» ՍՊԸ), որպես բավարար գնահատված բաց առաջարկների հայտ ներկայացրած մասնակից» որոշումը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 21.03.2017թ.-ին Խորհրդին է ներկայացրել բաց առաջարկների հարցման հանձնաժողովի 21.03.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, որի համաձայն՝ գնդային փականների գնման հանձնաժողովը որոշում է հրաժարվել և ավարտել №013/GArm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցման գործընթացը, համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների կարգի 9 կետի 9.5.1 ենթակետի և ծանուցման (հայտարարություն), բաց առաջարկների հարցման հրավերով պահանջված ապրանքների գնման պահանջը դադարելու պատճառով (ֆինանսական միջոցների անբավարարության և տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության պատճառով):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ №013/GArm/17_2.2_00/03.02.17 ծածկագրով բաց առաջարկների հարցման ընթացակարգը չկայացած հայտարարված լինելու պայմաններում, այլևս հնարավոր չէ դադարեցնել գնահատող հանձնաժողովի առանձին որոշումներ, ուստի այս հիմքով, Խորհուրդը գտնում է, որ «Երպետ» ՍՊԸ-ի 03.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

# Ո Ր Ո Շ Ե Ց

«Երպետ» ՍՊԸ-ի 03.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Բողոքը քննող հանձնաժողով՝**

**Նախագահ՝** **Գևորգ Հայրապետյան**

**Անդամ՝** **Ռուզաննա Հովհաննիսյան**